

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

### ԿԱՐԾԻՔ

#### ԷԼԼԱ ԱԶԱՏԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ

#### «ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՔՐՈՆՈՏՈՊԸ ԴՈՆ ԴԵԼԻՆՈՅԻ

#### ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԹԵՄԱՅՈՎ

#### **Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Էլլա Ասատրյանի «Պոստմոդեռնիստական քրոնոտոպը Դոն Դելիլոյի ստեղծագործության մեջ» թեմայով ատենախոսությունը նվիրված է ամերիկացի ժամանակակից գրող Դոն Դելիլոյի ստեղծագործությունը:

Աշխատանքի առավելություններից է սակավ անդրադարձ ունեցող, հայ ընթերցողին առաջին անգամ ներկայացվող գրողի ստեղծագործության հետ ծանոթությունը: Ըստ ատենախոսի՝ ամերիկացի ժամանակակից գրող Դոն Դելիլոյի ստեղծագործությունը բավականաչափ ուսումնասիրված չէ հայաստանյան գրականագիտության մեջ, սակայն նրա վեպերում արծարծված՝ համաշխարհային հնչեղություն ու արդիականություն ունեցող խնդիրներն ու մոտեցումները կարևոր են դարձնում անդրադարձը Դելիլոյի ստեղծագործությանը:

Էլլա Ասատրյանի՝ հրապարակային պաշտպանության ներկայացված աշխատանքը աներկբայորեն **արդիական է**, քանի որ թեմաները, որոնք արծարծված են, ի մասնավորի՝ ժամանակ և տարածություն հասկացությունների նկատմամբ հետաքրքրությունը սպառված չէ, իսկ տարբեր գրողների ստեղծագործություններում դրանց քննությունը չի կորցրել իր կարևորությունը մինչ օրս: Այս համատեքստում հետաքրքրական է հատկապես ատենախոսի

ներկայացրած պոստմոդեռնիստական քրոնոտոպի առանձնահատկությունների, մասնավորապես, ԴեԼիլոյի առաջ քաշած հայեցակարգի վերլուծությունը: որտեղ հավաստվում է այն թեզը, որ եթե դասական ընկալմամբ տարածությունն ու ժամանակը հանդես են գալիս փոխկապակցված, ապա պոստմոդեռնիստական տեսանկյունից դրանք կամ խճանկարային կերպ են ստանում, կամ վերածվում են մեկ ամբողջության: Ատենախոսի ուսումնասիրության հիմքում ընկած է այն թեզը, որ Դեիլոյի ստեղծագործություններում վիպական քրոնոտոպն օժտված է կարևոր առանձնահատկությամբ. մի շարք վեպերում՝ տարածության կատեգորիան է գերակայում ժամանակի նկատմամբ, մյուսներում՝ հակառակը:

Սույն ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից (101 հայալեզու և օտարալեզու աղբյուր) և հավելվածից:

Ներածության մեջ ատենախոսը հիմնավորում է թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, անդրադառնում է Դոն ԴեԼիլոյի ստեղծագործական ուղուն, ներկայացնում ատենախոսության նպատակներն ու խնդիրները, վերլուծության մեթոդները:

Իր աշխատանքի առաջին «Տարածությունը՝ որպես քրոնոտոպի կառուցման գերակա միավոր Դոն ԴեԼիլոյի ստեղծագործություններում» («Սպիրակ աղմուկ», «Մառ Երկրորդ», «Զրո Կ») գլխում ատենախոսն անդրադառնում է տարածության կատեգորիայի մանրազնին ուսումնասիրությանը՝ ցույց տալով դրա գերակայությունը ժամանակի կատեգորիայի նկատմամբ: Ուսումնասիրությունը ծավալվում է մի քանի վեպերի վերլուծությամբ, ինչն էլ ի հայտ է բերում այն գեղարվեստական միջոցներն ու թեմաները, որոնցով կառուցվում է տարածությունը ԴեԼիլոյի նշված վեպերում: Սույն գլխում որպես քրոնոտոպակերտ միավորներ են հանդես գալիս զանգվածային լրատվական միջոցներն ու հեռուստատեսությունը, որոնք այլընտրանքային վիրտուալ տարածություն են ձևավորում: Այս համատեքստում ատենախոսն

առաջարկում է այսուհետ կիրառել իր կողմից առաջադրած *մեդիափարածություն* եզրը՝ խորհրդանշելու մեդիայի ազդեցությամբ ձևավորված իրականությունը: Նշենք նաև, որ ատենախոսը տարածական առանձնահատկություններն ուսումնասիրելիս, անդրադարձել է այնպիսի տոպոսների ուսումնասիրությանը, ինչպիսին են հիպերմարկետը, առանձնատունը, բեյսբոլի մարզադաշտը, քաղաքները (Նյու Յորք, Լոնդոն, Աթենք, Բեյրութ), քաղաքային տարածությունից դուրս գտնվող լաբորատորիան:

Երկրորդ՝ *«Ժամանակը՝ որպես քրոնոտոպի կառուցման գերակա միավոր Դոն Դելիլոյի ստեղծագործություններում* («Ընկնող մարդը», «Կոսմոպոլիս», «Օմեգա կետը»)» գլուխը ներկայացնում է ժամանակի կատեգորիայի գերակայության պատկերումը վիպական տարածության նկատմամբ, ինչպես նաև վերհանում քրոնոտոպի ձևավորման մեխանիզմները: Այս գլխում որպես քրոնոտոպակերտ միջոցներ հանդես են գալիս ահաբեկչությունն ու արվեստը, նորագույն տեխնոլոգիաներով գերհագեցած ավտոմեքենան, որն ատենախոսը դիտարկում է որպես ժամանակի մեքենա, ինչպես նաև՝ ամայի վայրում տեղակայված առանձնատունը, որտեղ ժամանակի հոսքը դիտարկվում է անապատ-քաղաք հակադրության մեջ: Ժամանակ և տարածություն հասկացությունները դիտարկվել են ամերիկացի տեսաբան Փ. Սմեթիլըրսթի առաջարկած *սոցիալական ժամանակ և սոցիալական փարածություն* եզրերի համատեքստում, քանի որ ըստ ատենախոսի՝ Դելիլոն համոզմունք է հայտնում, որ ժամանակակից աշխարհում հենց սոցիալական երևույթներով է պայմանավորված քրոնոտոպի կառուցումը: Նշենք, որ այս գլխում ատենախոսն անդրադարձել է նաև ժամանակ և տարածություն հասկացությունների փոխադարձ կապի բացահայտմանը:

Կցանկանայինք առանձնացնել, որ ատենախոսը ժամանակի կատեգորիայի ուսումնասիրության շրջանակում առաջարկում է օգտագործել *անցյալացած ներկա*

եզրը՝ խորհրդանշելու ներկա և անցյալ ժամանակների փոխատեղումը, երբ անցյալը լիովին ստվերում է ներկան:

Ատենախոսության *Եզրակացություն* բաժնում ներկայացված են այն հիմնական դրույթները, որոնց ատենախոսը հանգել է ուսումնասիրության արդյունքում և որոնք պատասխանն են ատենախոսության սկզբում առաջադրված հարցադրումներին:

Այդուհանդերձ, Էլլա Ասատրյանի ատենախոսությունն առավել կատարյալ տեսնելու ցանկությունից ելնելով է, որ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում և առաջարկ, որոնք, կարծում ենք, ատենախոսը կարող է շահեկանորեն հաշվի առնել գիտական հետազոտության ընթացքում: Մասնավորապես՝

1. Ինչպես նշում է ատենախոսը՝ ԴեԼիլոյի վեպերը թարգմանված չեն հայերեն, և գուցե դա է պատճառը, որ ատենախոսության որոշ էջերում գրողի ստեղծագործություններից բերված մեջբերումները փոքր-ինչ երկարաձգված են /տես՝ ատենախոսություն, էջ 24, 27, 35, 52, 58, 72, 73, 80-81, 98 և այլն/: Կարծում ենք, որ ատենախոսության հեղինակի առաջ քաշած թեզերի լիովին արդարացված վերլուծությունները կարող էին արվել՝ այդ մեջբերված հատվածների առավել կարճ տարբերակների դեպքում նույնպես:
2. Թեպետ ատենախոսը յուրաքանչյուր գլխի վերջում ներկայացնում է վերլուծված վեպի մասին ամփոփում, ցանկալի կլիներ, որ ատենախոսության յուրաքանչյուր գլուխ, ինչպես նաև՝ ենթագլուխ ամփոփվեր իրականացված վերլուծության և առաջ քաշված հիմնական դրույթների մասին ընդհանրացված եզրահանգումով, օրինակ, պատճառաբանված դիտարկում արվեր այն մասին, թե գեղարվեստական որ միջոցների և առանցքային թեմաների դեպքում են գերակայում ժամանակի և որ դեպքում՝ տարածության դրսևորումները:

3. Ատենախոսության մեջ տեղ են գտել զուտ խմբագրական բնույթի վրիպակներ, եզրույթների օգտագործման որոշ անհարթություններ կամ օտարաբանություններ, օրինակ՝ *ցիկլիկություն* բառի փոխարեն կարելի էր գործածել հայերեն՝ *փուլային* կամ *շրջափուլայնություն* տարբերակը /տես՝ ատենախոսություն, էջ 4/, *պատմափյուզիական*-ի փոխարեն՝ *պատմափյաբանական* բառը /տես՝ ատենախոսություն, էջ 11/, կամ՝ իր կողմից առաջադրված տեղ *մեդիապարածություն* եզրույթը գրված է առանձին, մյուս տեղը՝ միասին /տես՝ ատենախոսություն, էջ 6, 19, 23, 54 /:

Կամ՝ *Մեր նպատակը ենթադրում է հեղուկալ խնդիրների լուծումը* ոչ այնքան հայերեն հնչողությամբ նախադասությունը կարելի էր փոխարինել, օրինակ, *Մեր նպատակին հասնելու համար արենախոսության մեջ առաջադրվել են հեղուկալ խնդիրները* նախադասությամբ և այլն:

Եվ վերջում՝ որպես հավելված ներկայացված են մի քանի պատկերներ, որոնք կիրառվել են վերլուծության ընթացքում: Ցանկալի կլիներ, որ ատենախոսը վերնագրեր հավելվածներում ներկայացված պատկերները:

Սակայն, վերը նշվածը բնավ չի նսեմացնում ատենախոսի կատարած չափազանց մանրակրկիտ, գիտական պատշաճ լեզվով, մեթոդաբանական կուռ հիմնավորմամբ առանձնացող այս ուսումնասիրության արժանիքները: Էլլա Ասատրյանը ներկայացրել է աշխատանք, որը և՛ ուսումնասիրության թեմայի ընտրությամբ, և՛ նորույթով ու արդիականությամբ՝ տեսական և գործնական անժխտելի արժեք ունի:

Սեղմագրում ներկայացված դրույթները և տպագիր աշխատանքները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:



Կարծում ենք, **ԷԼԼԱ ԱԶԱՏԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ «ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻՍԱԿԱՆ ՔՐՈՆՈՏՈՂԸ ԴՈՆ ԴԵԼԻԼՈՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ»** թեմայով ատենախոսությունը բավարարում է **Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն»** մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսությանը ներկայացվող պահանջներին և ատենախոսը միանգամայն արժանի է իր հայցած՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝  
բ.գ.դ., պրոֆեսոր

Գայանե Եղիազարյան

Գ. Եղիազարյանի ստորագրությունը հաստատում են՝  
Վ.Բրյուսովի պետական հալսարանի  
գիտական քարտուղար



Հասմիկ Փիլավջյան